ՆԱԾԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2025 թվականի №-Ա

«ԷՎԵԼՊԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՎԱՀԱԳՆԱՁՈՐ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0745 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի հունիսի 30-ի №218-Ա որոշմամբ «ԷՎԵԼՊԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Վահագնաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0745 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0745 լիցենզիա) պայմանների 13-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը պարտավորեցվել էր մինչև 2024 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ) ինչը, սակայն, չի կատարվել, ի հետևանք որի՝ նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2025 թվականի հունվարի 1-ը,

բ) Ընկերությունը մինչև 2025 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ինչը փաստվել է Հանձնաժողովի 2025 թվականի մարտի 19-ի №77-Ա որոշմամբ և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, Նախագիծը ներկայացնելու ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված՝ մինչև 2025

թվականի հոկտեմբերի 1-ը, մինչդեռ նշված ժամկետում այն դարձյալ չի ներկայացվել,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի հոկտեմբերի 6-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0745 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի քննարկման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 6-ի № ՄՄ/34.3-Մ2-12/5559-2025 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողով ներկայացված 2025 թվականի նոյեմբերի 25-ի գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տված խախտումը և հայտնել է, որ ներկայումս իրականացվում է Կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննությունը, որի առաջին լսումը անցկացվել է և փաթեթը գտնվում է շրջանառության մեջ: Միևնույն ժամանակ հայտնել է, որ երկրորդ լսումը ավարտելուց հետո կիրականացվի պետական համալիր փորձաքննություն և ավարտելուն պես կներկայացվի Հանձնաժողով,

ե) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ հետևյալ պայմաններով.

1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ առանց որևէ վարչական և ֆինանսական պատասխանատվության.

2) 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

3) նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում՝ արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0745 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ

երկարաձգված ժամկետում՝ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼԷ №0745 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը, Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու հիմքով կասեցնել Ընկերության ԼԷ №0745 լիցենզիայի գործողությունը՝ մինչև կասեցման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
նոյեմբերի 2025թ.